

այսպիսի մարդասիրութեամբ ու քաղաքավարութեամբ զիս ընդունեցաք . ես մինչև հիմայ բողոքովին ձեզի օտար էի , բայց պիտի գիտնաք հաստատ , որ ձեր ներկայացընողն որ ըլլամ՝ անանկ չըլլար , վասն զի ան ատեն ինծի պարտք կը սեպեմ որ ձեր մէջը գամ , ձեզի հետ բնակիմ , ձեզի հետ մէկ ըլլամ . բարեկամ , և ոչ օտարական . (Օռարթնութիւն .) նոյնպէս շնորհակալ եմ որ ներողամտութեամբ աս ձեր ժողովքին մէջ մտիկ ըրիք աս իմ տկար խօսակցութեանս : Իմենայն վստահութեամբ իմ գործքս ձեր ձեռքը կը թողում , և առ այժմ կը հրաժարիմ ձեզմէ , : (Բարձրագոյն զորութեան :)

Երկրորդ օրը 1847^{ին} յուլիսի 29^{ին} ժամը չորսին անուանց ցանկը գոցուեցաւ , ու շերիֆը թիւերը համբեւէն ետեւ՝ իմացուց որ

Պարոն Սաֆայէլ 295 թիւ ունէր .

Պարոն Սէփթըն 276

Պարոն Սիւլքս 230

Պարոն Վրէլըն 176

ու հրատարակեց որ Պարոն Սաֆայէլ ու Պարոն Սէփթըն օրինաւորապէս ընտրուածներն էին :

Պարոն Սաֆայէլ ան ատեն առաջ եկաւ ու համառօտ և իմաստալից խօսակցութեամբ մը շնորհակալութիւն ըրաւ զինքը ընտրող և հաստատող հանդիսականաց . օգոստոսի 2^{ին} ալ նորէն շնորհակալութեան թուղթ մը գրեց սուրբ Լլպանի բնակիչներուն :

Իսկ աս սուրբ Լլպան աւանը անուանի է հին Հռոմայեցւոց շինած քաղաքներէն մէկը ըլլալուն պատճառաւ , որ ան ատեն Սէրուլամ կ'ըսուէր . հիմակո՛ւան անունը առնուած է հռչակաւոր մենաստանէն՝ որ Սֆֆա թագաւորը ու թերորդ դարուն մէջ շինել տուեր է՝ ի պատիւ սրբոյն Լլքանոսի , որ 303^{ին} Վիոկղետիանոսի հալածանաց ժամանակը Բրիտանիոյ մէջ մարտիրոս եղեր է : Սէջը իրեք եկեղեցի ունի . սրբոյն Լլքանոսի , սրբոյն Սիքայէլի ու սրբոյն Հեղինայ : Սրբոյն Լլքանոսի եկեղեցւոյն ճարտարապետութիւնը անուանի

է . երկայնքը 600 ոտք է , ու լայնքը՝ թւերն ալ մէկ տեղ առած՝ 174 : Սէջը 17 թագաւորի արձան կայ , ու բարերարներու յիշատակարաններով ու շիրիմներով լեցուն է : Սֆֆա թագաւորին ատենը մենաստանին մէջ 100 կրօնաւոր կայ եղեր , ու շատ հարուստ մենաստան էր : Երկելի յորտ Պէքընին մարմինը սուրբ Սիքայէլի եկեղեցին թաղուած , ու սև մարմարիոնէ արձան մ'ալ կանգնած է յիշատակին :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Որոշանք :

ՊԵԼՃԻՈՅ Սուլիթպրէօք գեղը մօտերս մեծ շփութութիւն մը ընկեր է , և պատճառը ճերմակ ուրուականի մը երևնալն եղեր է : Վիշերապահ զինուորները մէկ գիշեր մը գեղին գերեզմաննոցէն անցնելու կ'ըլլան . մէյմ'ալ տեսնեն որ գետնէն վեր ճերմակ ուրուական մը կ'ելլէ տըքալով ու հառաչելով : Սինուորները դողդողալով կը մօտենան , կը նային որ մէյմըն ալ կ'երևնայ ուրուականը . ահով դողով կրօնականին դարձրնեն ու ետ փախչիլը մէկ կ'ընեն : Սէկերնին կը վազէ մեռելաթաղին իմաց կուտայ . ան ալ կ'երթայ վախով խելով , կը մօտենայ կը նայի որ ուրուական ըսածնին գինով պառաւ մըն է որ գերեզմաննոցէն անցնելու ատենը՝ նոր փորուած փոսի մը մէջ ընկեր է եղեր . ողորմելին ելլեմ կ'ըսէ՝ չկրնար , ան պատճառաւ կը հառաչէ ու կ'ողբայ եղեր :

Ի խօրհան :